2023, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (631)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռում

Հունիսի 5–8-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ժողովն ատենապետեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը, իսկ նիստերը վարեց ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը:



Հայաստանում ու Արցախում ստեղծված կացության վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Արցախի արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանը եւ ԳՀԽ անդամ ի. գ. դ. Գեւորգ Դանիելյանը:

Զեկույցներում անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Արցախի շուրջ աղետալի զարգացումներին՝ մասնավորաբար շրջափակման հետեւանքով Արցախի Ժողովրդին սպառնացող ցեղասպանության վտանգին եւ Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ իրականացվող ոտնձգություններին: Անհանգստությամբ անդրադարձ եղավ նաեւ երկրի ներսում գոյացած մարտահրավերներին, հասարակական անհամերաշխությանն ու բեւեռացվածությանը:

ԳՀԽ-ն խոր մտահոգությամբ արձանագրեց հայրենական կյանքում ստեղծված ծանր կացությունը: Կարեւորեց, որ Հայաստանի իշխանությունները հրաժարվեն ազգի արժանապատվությունը ոտնահարող գործողություններից եւ արտաքին թշնամիների նվաստացուցիչ հավակնություններին ու պահանջներին հակադրեն իրատեսական եւ բացառապես հայանպաստ դիրքորոշումներ՝ վճռականորեն պաշտպանելով Արցախի ժողովրդի ինքնորոշման անսակարկելի իրավունքը:

ԳՀԽ-ն իր զորակցությունը հայտնեց Արցախի ժողովրդին եւ իշխանություններին՝ արձանագրելով նաեւ, որ Արցախի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքը պաշտպանություն պիտի գտնի համազգային բոլոր շրջանակներում: Ժողովականներն ընդգծեցին, որ պետք է ամեն ջանք ի գործ դնել ժողովրդի միասնության ոգին զորացնելու եւ համերաշխության մթնոլորտ ձեւավորելու համար:

Արցախին ուղղված սոցիալական աջակցության վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի սոցիալական բաժնի տնօրեն Տ. Մարկոս քհն. Մանգասարյանը: Տեր հայրն ի մասնավորի ընդգծեց, որ շրջափակման մեջ գտնվող Արցախին Ամենայն Հայոց Հայրապետի հորդորով ու ջանքերով, Մայր Աթոռի աշխարհասփյուռ թեմերի գործուն մասնակցությամբ տրամադրվել է 360 տոննա մարդասիրական օգնություն: Տրամադրվող աջակցությունը կլինի շարունակական:

Ժողովականները, մտահոգությամբ անդրադառնալով ադրբեջանական շրջափակման հետեւանքով շարունակվող հումանիտար ճգնաժամային իրավիճակին, ընդգծեցին սոցիալական աջակցության ծրագրերի ընդլայման անհրաժեշտությունը:

Հանրակրթական դպրոցներում Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման եւ կրթական հիմնախնդիրների մասին զեկուցեց Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Տ. Վազգեն արք. Միրզախանյանը՝ տեղեկացնելով, որ կառավարության նախաձեռնությամբ ՀՀ-ում հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրմամբ առարկան ամբողջապես դուրս է բերվում կրթական ծրագրից:

Քննարկումների ընթացքում ԳՀԽ-ն, վերահաստատելով իր դիրքորոշումը, անթույլատրելի համարեց առարկայի դուրս բերումը հանրակրթական ծրագրից՝ ընդգծելով, որ այն կարեւոր գործոն է սերունդների դաստիարակության ու կրթության առաքելության մեջ: Այս համատեքստում անդրադարձ եղավ հատկապես անչափահասների շրջանում բռնությամբ ուղեկցվող ծանր հանցագործությունների ու թմրամոլության ահագնացող աճին: Կենսական համարվեց, որ իշխանությունները գործնական եւ արդյունավետ քայլեր իրականացնեն՝ պայքարելու հիշյալ երեւույթների դեմ, ինչպես եւ հասարակության մեջ՝ հատկապես կրթական հաստատություններում, արժեւորելու հանուն հայրենիքի պայքարի ելած մեր նահատակ հայորդիների սխրանքը, որպեսզի չտկարանա ազգի զավակների հայրենանվիրումի ոգին:

Մայր տաճարի հիմնանորոգության եւ ամրակայման աշխատանքների, մյուռոն օրհնության եւ հարակից միջոցառումների կազմակերպման վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը եւ լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Քննարկումների արդյունքում ԳՀԽ-ն, հաշվի առնելով Մայր տաճարի հիմնանորոգման աշխատանքների ծավալների ընդլայնման եւ ընթացող աշխատանքների ժամանակատարության հանգամանքները, որոշեց՝

— Մայր տաճարի վերաօծման արարողությունը հետաձգել մինչ հիմնանորոգման աշխատանքների ամբողջական ավարտը,

— Սրբալույս մյուռոնի օրհնության արարողությունը կազմակերպել սույն թվականի հոկտեմբերի 1-ին,

— Եպիսկոպոսաց ձեռնադրություն կատարել հոկտեմբերի 8-ին:

Ժողովում անդրադարձ եղավ նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության՝ երկարաժամկետ վարձակալության տրված կալվածքների խնդրին, եւ արձանագրվեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կապի մեջ է Պատրիարքարանի հետ եւ ի մոտո հետեւում է ընթացող զարգացումներին:

Քառօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների ու թեմերի գործունեությանը, Եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչվող այլ հարցեր:

Ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ գնահատանքի խոսքով:

Միաբանական համագումար Մայր Աթոռում

Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ սույն թվականի հունիսի 5–11-ը՝ Արարատյան շաբաթվա տոների ընթացքում, համայն հայության հոգեւոր կենտրոնում կայացավ «Սուրբ Էջմիածինը որպես առաքելություն» խորագրով միաբանական համագումար: Համաժողովին մասնակցեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում եւ կառույցներում ծառայող միաբանները (աբեղաներ, վարդապետներ, ծայրագույն վարդապետներ): Ներկա էին նաեւ միաբաններ Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռներից՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Կ. Պոլսի եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքություններից:

Միաբան հայրերն աղոթքի համախմբությամբ մասնակցեցին տոնական շաբաթվա սուրբ պատարագներին, որոնք ամբողջացան միաբանական ուխտի սուրբ պատարագով եւ Կաթողիկե Ս. Էջմիածնի սրբազան տոնակատարությամբ:

Ժողովական օրերին բանախոսությամբ հանդես եկան Տ. Վազգեն արք. Միրզախանյանը (թեմա՝ «Նախաշավիղ Հայ Եկեղեցու սոցիալական ուսմունքի»), Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը (թեմա՝ «Հայաստանյայց Եկեղեցին միջեկեղեցական հարթակներում») եւ Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը (թեմա՝ «Հայ Առաքելական Ս. Եկեղեցու քարոզչական ու հոգեւոր-կրթական առաքելությունը ժամանակակից աշխարհում. տեսլականներ եւ մարտահրավերներ»): Թեմաների առնչությամբ տեղի ունեցան խմբային քննարկումներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ համաժողովի մասնակից միաբան հայրերը մեկնեցին նաեւ Տավուշի եւ Գեղարքունիքի թեմերի սահմանամերձ համայնքներ՝ հովվական այցելություններ կատարելով, օրհնություն եւ Աստծու խոսքով մխիթարություն բաշխելով հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոսների ընտանիքներին, ինչպես նաեւ բազմազավակ ու կարիքավոր ընտանիքներին:

Հավարտ համագումարի՝ ընտրվեց միաբանական հաջորդ ժողովի դիվանի կազմը:

Համագումարի ընթացքում առանձնակի մտահոգությամբ անդրադարձ եղավ Հայաստանում եւ Արցախում ստեղծված աղետալի իրավիճակին: ➥ էջ 2



Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը ժամանեց Սուրբ Էջմիածին

Հունիսի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը: Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին թափորով առաջնորդեցին Սուրբ Հովհաննես Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարան, ուր կատարվեց «Հրաշափառի» արարողություն: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը Մայր Աթոռի միաբանության անունից ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց Սահակ Պատրիարքին: Այնուհետեւ Պոլսո Հայոց Պատրիարքը, գոհություն վերառաքելով առ Աստված՝ վերստին հայոց հոգեւոր կենտրոնում գտնվելու համար, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Սուրբ Էջմիածնի միաբանությանը:

Առաջիկա օրերին Սահակ Պատրիարքն իր մասնակցությունը բերեց Մայր Աթոռում գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի դատգամը միաբանական համագումարի մասնակիցներին

Հունիսի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանի, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսների հետ ներկա գտնվեց Սուրբ Էջմիածնում ընթացող միաբանական համագումարի նիստին: Հավաքին մասնակցում էին Հայաստանի եւ Սփյուռքի թեմերից եւ եկեղեցական կառույցներից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան վարդապետներ ու աբեղաներ, ինչպես նաեւ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Կ. Պոլսի եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքություններից:

Միասնական Տերունական աղոթքից հետո ներկաներին ողջունեց Մայր Աթոռի քարոզչական կենտրոնի տնօրեն եւ միաբանական համագումարի ատենապետ Տ. Գարեգին վրդ. Համաբարձումյանը: Հայր սուրբն իր խոսքում ներկայացրեց համագումարի մասնակիցների հովվական երկօրյա այցը Գեղարքունիքի եւ Տավուշի թեմեր: Հայր Գարեգինն ի մասնավորի կարեւորեց միաբան հայրերի այցը սահմանամերձ տարբեր համայնքներ, հանդիպումներն արցախյան 44-օրյա պատերազմում զոհված, վիրավոր եւ անհայտ կորած զինվորների ընտանիքներին, ինչպես նաեւ՝ բազմազավակ ու Արցախից տեղահանված ընտանիքներին:

Ապա համագումարի մասնակիցներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունն ուրախությամբ ողջունեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի, Սուրբ Էջմիածնում համախմբված Մայր Աթոռի միաբանների եւ Նվիրապետական Աթոռներից ժամանած եկեղեցականների ներկայությունը համագումարին՝ ընդգծելով, որ նման հավաքները կարեւոր առիթներ են հոգով զորացման եւ ուխտի նորոգության համար, ինչպես նաեւ արծարծելու Հայ Եկեղեցուն, եկեղեցականներին ու հավատացյալներին հուզող խնդիրները:

«Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ համագումարն անց է կացվում Սուրբ Էջմիածնի հիմնադրման 1720-ամյակի տարում՝ «Էջմիածինը որպես առաքելություն» խորհրդանշական կարգախոսի ներքո: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի էջքով Սուրբ Էջմիածինը Աստծու առանձնահատուկ օրհնություն ու երկնային պարգեւ դարձավ մեր ժողովրդի կյանքում: Սուրբ Էջմիածնի խորհուրդը գեղեցկորեն բանաձեւել է պատմիչը՝ ասելով. «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»: Սուրբ Էջմիածինը նաեւ դուք եք, նրա առաքելությունը ձեր ծառայությունն է հայրենիքում եւ աշխարհի տարբեր կողմերում: Տիրոջով ու ձեր արդյունավոր սպասավորությամբ որքան զորավոր եք դուք, այնքան զորավոր է եւ Սուրբ Էջմիածինը»,– ասաց Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով, որ ինչքան արգասալի եւ աշխույժ է միաբանների հովվական, վարչական, հոգեմտավոր ծառայությունը, այնքան ամուր եւ անսասան է Սուրբ Էջմիածնի առաքելությունը ժողովրդի կյանքում:

Ազգի ու հայրենիքի առջեւ ծառացած տարաբնույթ մարտահրավերների պայմաններում Հայոց Հայրապետն անհրաժեշտ նկատեց առավել արթուն ու պատասխանատու սպասավորության իրագործումը, որպեսզի Եկեղեցին միշտ վառ պահի հավատքի ջահը եւ պահպանի ու պաշտպանի հայ ժողովրդին գլուխ բարձրացնող վտանգներից ու սպառնալիքներից:

«Այս իրողությունների լույսի ներքո մենք պետք է սահմանենք եւ որոշակիացնենք մեր Սուրբ Եկեղեցու տերունապատվեր ծառայության առաջնահերթությունները՝ իրենց ուղղություններով, ծրագրերով ու անելիքներով, եւ լայն ժամանակաշրջանի նախատեսումով հաստատենք մշակված ռազմավարություն՝ արձանագրելով հովվական գործունեության տեսականն ու ակնկալվող արդյունքները հոգեւոր, կրթական, մշակութային, հասարակական ոլորտներում, ինչպես նաեւ նորօրյա ընկալումներով Աստծու խոսքը, հոգեւոր արժեքների քարոզչությունն առավել մատչելի եւ հասանելի դարձնենք մեր Սուրբ Եկեղեցու զավակներին»,– նշեց Նորին Սրբությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտահոգությամբ արձանագրեց, որ Եկեղեցու հեղինակությանը շարունակաբար հարվածներ են հասցվում՝ փորձելով նվազեցնել հայ ժողովրդի կյանքում Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ եկեղեցականի բարերար ազդեցությունն ու գործունեությունը եւ տկարացնել ժողովրդի միասնության, միաբանության ու ազգային ինքնության պահապան ավանդական կառույցը: Այս առնչությամբ Հայոց Հովվապետը հորդորեց եկեղեցականներին լինել նախանձախնդիր իրենց խոսքի, գործի ու քայլերի մեջ, սրբագրել թերացումները՝ բարի օրինակ հանդիսանալով մարդկանց, հանապազ սեր եւ հոգատարություն դրսեւորելով ժողովրդի հանդեպ:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Եկեղեցի–պետություն հարաբերություններում առկա տարաձայնություններին, որոնք հետեւանք են Եկեղեցու առաքելության վերաբերյալ իշխանությունների թյուր պատկերացումների, այլեւ հայրենական կյանքի տարաբնույթ մարտահրավերների հանդիման Եկեղեցու սկզբունքային դիրքորոշումների: Այդ ծիրում Հայոց Հայրապետն անընդունելի համարեց Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի դուրս բերումը դպրոցական ծրագրերից, որը կարեւոր նպաստ էր մատաղ սերնդին համամարդկային հոգեւոր արժեքների, քրիստոնեական հավատքի սկզբունքների, ազգային ինքնության եւ ինքնագիտակցության, մեր սրբազան ժառանգության վերաբերյալ գիտելիքների մատուցման կարեւոր գործում: *«Հայրենաշինության, պետության բարօրության ու զորացման առաքելության մեջ մեր Սուրբ Եկեղեցին միշտ զորակից է իշխանություններին: Սակայն մեր կոչումն է համարձակությամբ ահազանգել վտանգների մասին, դեմ կանգնել ազգային անդաստանում անարդարության դրսեւորումներին, հայրենիքին, համազգային շահերին վնասող գործընթացներին»,–* հավելեց Վեհափառ Հայրապետը:

Հետպատերազմական դժվարին այս իրավիճակում Հայոց Հովվապետը հորդորեց հոգեւորականներին շարունակական ջանքեր գործադրել պատերազմից տուժածների, զոհվածների, հաշմանդամ դարձած, գերեվարված ու անհայտ կորած հայորդիների ու նրանց ընտանիքների համար մատուցվող հոգեխնամ ու սոցիալական առաքելության մեջ:

«Մեր ժողովրդի ու հայրենիքի համար այս դժվարին պահին հրամայական է, որ սփյուռքի համայնքներում ամենքդ ավելի զորացնեք ձեր ջանքերը՝ հնարավոր բոլոր միջոցները գործադրելու պետական, դիվանագիտական, միջազգային եւ միջեկեղեցական կառույցների առջեւ բարձրաձայնելու Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիայի, արցախյան հիմնահարցի կարգավորման, Լաչինի միջանցքի ապաշրջափակման, Արցախում բնակվող մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի ապահովման հիմնախնդիրները, որպեսզի ի զորու լինենք մեր երկրին պատուհասած փորձություններին դիմակայելու եւ հայրենաշահ լուծումներ գտնելու:

....Եկեղեցին չունի որեւէ այլ շահ, քան այն, որ բխում է Աստծու հանդեպ, հայրենիքի եւ ժողովրդի հանդեպ պատասխանատվությունից: Եկեղեցու առաքելության հիմնական նպատակը մարդն է ու նրա հոգու փրկությունը եւ փրկարար այդ ծառայության հետ մեկտեղ՝ ազգապահպանությունն ու հայրենի երկրի զորացմանը ծառայելը: Արդ, հարկ է հստակ պահել տեսլականը, թե ինչպիսի հավատացյալ հայորդի, ինչպիսի հայ մարդ ենք ցանկանում կրթել ու դաստիարակել, որպեսզի հոգեւորականի խոսքն ու անելիքը միտված լինեն այդ հիմնական գործին: Մարդու կյանքում միայն հավատքի վերացական առկայությունը բավական չէ, այլ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությամբ պետք է շարունակենք կերտել աստվածասեր, հայրենանվեր ու ազգանվեր նկարագրով հայ մարդ՝ կրողը մեր նախնյաց ավանդների ու ժառանգության»,– եզրափակեց Նորին Սրբությունը՝ բարեմաղթելով միաբան հայրերին իրենց հոգեւոր սպասավորության մեջ Տիրոջ զորակցությունը:

Միաբանական հավաքի մասնակիցներին ողջունեց ու իր բարեմաղթանքները փոխանցեց նաեւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը:

Հունիսի 10-ին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի «Ելն ի վիրապէն» տոնի օրը, միաբանական հավաքի մասնակիցները Խոր Վիրապի վանքում մասնակցեցին սուրբ պատարագին եւ անդաստանի արարողությանը:

Միաբանական համագումար Մայր Աթոռում

➥ էջ 1

Այս առնչությամբ միաբան հայրերը հանդես եկան հետեւյալ հայտարարությամբ.

«Միաբանական համագումարի մասնակիցներս, առաջնորդված ազգի ու հայրենիքի առջեւ ծառացած լրջագույն հիմնախնդիրների դիմագրավման եւ հայոց անկախ պետականության զորացման հրամայականով, կոչ ենք ուղղում համայն մեր ժողովրդին.

– Համախմբվել եւ ամրապնդել ազգային միաբանությունը՝ անխաթար պահելով ազգային-հոգեւոր արժեքները, որոնք դարեր շարունակ սնուցել ու զորացյալ են պահել մեր ինքնությունը: Հայոց կյանքից հեռու վանել ատելությունն ու թշնամանքը, քաղաքական համոզումներով թելադրված անհանդուրժողության ցանկացած դրսեւորում՝ ազգային կյանքի ընթացքն ամրորեն խարսխելով եղբայրսիրության ու համերաշխության հիմերի վրա:

– Թոթափել հայրենիքի շուրջ ծավալվող ցավալի զարգացումների նկատմամբ անտարբերությունը եւ զերծ մնալ ներշնչվող անկարողության ու հարմարվողականության մտայնություններից:

– Ամուր եւ աներեր պահել Հայաստան–Արցախ–Սփյուռք կապը եւ ազգային ողջ ներուժը գործի դնել՝ ի խնդիր Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության, ծանր վիճակի մեջ գտնվող մեր հայրենիքի անվտանգության ապահովման:

Հորդորում ենք հայրենի իշխանություններին.

– Նախանձախնդրորեն հետամուտ լինել արցախահայության՝ սեփական բնօրրանում ազատ, անկախ եւ անվտանգ ապրելու աստվածատուր իրավունքի իրացմանը, նաեւ Հայաստանի սահմանամերձ տարածքների անվտանգությանն ու անձեռնմխելիությանը:

– Հրաժարվել Հայ Եկեղեցու պատմություն առարկան դպրոցական ծրագրերից դուրս մղելու որոշումից եւ նպաստել հայրենի դպրոցներում դրա արդյունավետ դասավանդմանը:

Տիրավանդ սիրով հայտնում ենք մեր զորակցությունն արցախահայ մեր եղբայրներին ու քույրերին՝ քաջալերելով, հակառակ առկա մարտահրավերներին, երբեք չընկրկել դժվարությունների առջեւ, շարունակել պաշտպանել ու շենացնել Արցախ աշխարհը՝ զորացած հույսով ու հավատքով:

Միակամ վճռականությամբ հայտնում ենք մեր հանձնառությունը՝ անելու կարելին հայրենիքում եւ սփյուռքի համայնքներում մեր ժողովրդի ներուժի համախմբման համար՝ ի նպաստ ազգային ու հայրենական կյանքը փոթորկող եւ հուզող խնդիրների հաղթահարման:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր աղոթքն ենք վերառաքում առ բարձրյալն Աստված, որ Տերն Իր ամենախնամ Աջի հովանու ներքո պահի, պահպանի եւ բարձրացնի ազգս հայոց՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հունիսի 1-ին **Արգենտինա–Հայաստան բարեկամական խմբի անդամներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի խորհրդարանի Արգենտինա–Հայաստան բարեկամական խմբի նախագահ Գիժերմո Անդրադայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստան–Արգենտինա բարեկամական խմբի ղեկավար Իշխան Սաղաթելյանի:

Հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ-ում Արգենտինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Մարիանո Վերգարան եւ Արգենտինայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Վիրաբյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադառնալով երկու երկների հարաբերություններին, ընդգծեց, որ դրանք հատկանշված են սերտ բարեկամությամբ, եւ Արգենտինան դժվարին իրավիճակներում, հատկապես արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում, մշտապես զորակից է եղել հայ ժողովրդին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ Արգենտինայի Սենատի՝ Լաչինի միջանցքի արգելափակումը դատապարտող եւ դադարեցնելու կոչ անող հայտարարությանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց տարածաշրջանում առկա մարտահրավերներին, Հայաստանի սահմանների նկատմամբ ոտնձգություններին, Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին, մինչեւ օրս գերության մեջ պահվող հայորդիներին, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին:

Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց բարեկամ երկրների, խորհրդարանական եւ պետական գործիչների ու անհատների ջանքերը՝ ուղղված միջազգային ատյաններում արցախահայության ազատ եւ անկախ ապրելու արդար իրավունքի պաշտպանությանը՝ վստահություն հայտնելով, որ հայ ժողովուրդը քրիստոնեական հավատքի եւ լավատեսական ոգու շնորհիվ կկարողանա հաղթահարել առկա դժվարություններն ու մարտահրավերները:

Արգենտինա–Հայաստան բարեկամական խմբի նախագահ Գիժերմո Անդրադան Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ իրենց այցի նպատակն է նաեւ անմիջականորեն ծանոթանալ Հայաստանում եւ Արցախում տիրող իրավիճակին՝ հավաստիացնելով, որ իրենց լիազորությունների շրջանակներում կնպաստեն տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման գործընթացներին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ քույր Եկեղեցիների եւ միջեկեղեցական կազմակերպությունների ներդրած ջանքերին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ առկա մարտահրավերների հաղթահարման գործում:

Հունիսի 11-ին **Միաբանական համագումարի գործող եւ նորընտիր հանձնախմբերի անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց միաբանական համագումարի գործող եւ նորընտիր կազմակերպիչ հանձնախմբերի անդամներին:

Նորին Սրբությունը կատարված հաջող աշխատանքների համար իր գնահատանքը հայտնեց միաբանական համագումարի գործող հանձնախմբին, որի կազմում ընդգրկված են Մայր Աթոռի քարոզչական կենտրոնի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, ԳՀԵ-ի պատմական աստվածաբանության ամբիոնի վարիչ Տ. Անդրեաս վրդ. Եզեկյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի փոխտնօրեն Տ. Տիրայր վրդ. Հակոբյանը, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմից Տ. Երեմիա վրդ. Աբգարյանը, ԱՄՆ հայոց արեւելյան թեմից Տ. Առեն աբդ. Ճեպեճյանը, Իսպանիայում եւ Պորտուգալիայում Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Շնորհք աբդ. Սարգսյանը:

Հայոց Հովվապետը նաեւ իր հայրական օրհնությունը բերեց նոր հանձնախմբի անդամներին՝ ԱՄՆ հայոց արեւելյան թեմից Տ. Սիմեոն աբդ. Օդաբաշյանին, Մայր Աթոռի արխիվի եւ թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ աբդ. Կարապետյանին, Տ. Դերենիկ աբդ. Սահակյանին, Վիրահայոց թեմից Տ. Հակոբ աբդ. Սահակյանին, Տ. Աղան աբդ. Երնջակյանին, Իրաքի հայոց թեմից Տ. Ղեւոնդ աբդ. Սաղաթելյանին: Նորին Սրբությունը հորդորեց միաբաններին ջանասիրությամբ ու աննվազ եռանդով ձեռնամուխ լինել հաջորդ միաբանական հավաքի կազմակերպմանը՝ նկատի առնելով հայրենիքին, Եկեղեցուն եւ ժողովրդին հուզող արդիական խնդիրները:

Միաբանական համագումարը տեղի է ունենում երկու տարին մեկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում ծառայող միաբանները (աբեղաներ, վարդապետներ եւ ծայրագույն վարդապետներ) մեկտեղվում են հայոց հոգեւոր կենտրոնում՝ քննարկելու Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները, դրանց հաղթահարման ուղիներ փնտրելու, փոխանակելու հոգեւոր ծառայության փորձառությունը, ինչպես նաեւ վերանորոգելու իրենց ուխտը:

Հունգարիայի փոխվարչապետի գլխավորած պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեմյենի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Հունգարիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Աշոտ Սմբատյանը եւ ՀՀ-ում Հունգարիայի արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Աննա Մարիա Շիկոն: Զրույցի ընթացքում անդրադառնալով Հայաստանի եւ Հունգարիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների վերականգնմանը՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն հայ-հունգարական կապերի եւ համագործակցության առավել արդյունավորման ուղղությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս փոխվարչապետի, իր գնահատանքը հայտնեց Հունգարիայի իշխանություններին հայկական համայնքին ցուցաբերվող զորակցության, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքի երկրներում քրիստոնեական համայնքներին աջակցության համար:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը մտահոգությամբ անդրադարձ կատարեց Հայաստանի ինքնիշխան տարածքների եւ Արցախի ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի շարունակական ոտնձգություններին՝ կարեւորելով տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանն ուղղված՝ միջազգային կառույցների հետեւողական քայլերի իրականացման անհրաժեշտությունը: Նորին Սրբությունն այս կապակցությամբ իր երախտագիտությունը հայտնեց Հունգարիայի իշխանություններին հայ հինգ ռազմագերու հայրենադարձման հարցում ներդրած միջնորդական ջանքերի համար:

Իր հերթին փոխվարչապետ Ժոլտ Շեմյենը խոսեց հայ-հունգարական դիվանագիտական կապերի վերականգնման կարեւորության մասին: Փոխվարչապետը հավաստիացրեց Հայոց Հայրապետին, որ Հունգարիայի իշխանությունները շարունակելու են իրենց աջակցությունը Հունգարիայի հայ համայնքին եւ հայոց եկեղեցուն, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքի երկրներում քրիստոնեական համայնքներին: Պրն. Շեմյենը Վեհափառ Հայրապետին նաեւ տեղեկացրեց, որ Հունգարիայում գործող հայկական եկեղեցին ստացել է պետական գրանցում:

Պրն. Ժոլտ Շեմյենը կատարեց նաեւ մեկ այլ պարտականություն՝ Ամենայն Հայոց Հայրապետին հանձնելով Բուդապեշտի Կարոլի Գաշփար համալսարանի պատվավոր դոկտորի կոչումը:

Հանդիպմանը նաեւ խոսվեց միջեկեղեցական հարաբերությունների, ինչպես նաեւ Հունգարիայի հայ համայնքի կյանքի մասին:

Հունիսի 12-ին **Կալիֆոռնիայի համալսարանի պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտի խորհրդի նախագահ Չարլզ Ղայլյանի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը տիար Չարլզ Ղայլյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց այցի մասին՝ ուղղված Հայաստանի ազգային պոլիտեխնիկական եւ Հայաստանի ամերիկյան համալսարանների հետ կապերի ընդլայնմանը, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում երկրի առաջատար բուհերի հետ համագործակցության նոր հնարավորությունների բացահայտմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց բուհերի միջեւ հաստատվող գործակցությունը՝ կարեւոր նկատելով երիտասարդ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում նման նախաձեռնությունները: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ գիտության տարբեր ճյուղերի նվաճումներին հաղորդ լինելը եւ բարձր տեխնոլոգիաների զարգացմանը համաքայլ ընթանալը կարող են երաշխավորել շատ ոլորտներում երկրի առաջընթացը:

Նորին Սրբությունը ձեւավորվող համագործակցությունը Հայաստանի նկատմամբ բարեկամ երկրների զորակցության եւս մեկ վկայություն նկատեց՝ հավելելով, որ հայրենիքի այս դժվարին իրավիճակում նման նախաձեռնությունները լավատեսություն են ներշնչում հայորդիներին: Գարեգին Երկրորդ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Աստծու օրհնությամբ պատվիրակության ջանքերը եւ բուհերի միջեւ գործակցությունը բարի արդյունավորում կունենան:



Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակի օրը Ս. Էջմիածնում

Հունիսի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը: Տոնի առիթով առավոտյան Մայր Աթոռից եկեղեցականների հանդիսավոր թափորն առաջնորդվեց Սուրբ Գայանե վանք: Թափորը մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը՝ մարտիրոս սրբուհու մասունքն ամփոփող Աջով օրհնելով բարեպաշտ ժողովրդին: Այնուհետեւ Պատրիարք սրբազան հայրը մասունքակիր Աջը փոխանցեց Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Օշական վրդ. Կյուլկյուլյանին:

Սուրբ Գայանե վանքի առջեւ թափորը դիմավորեցին Մայր Աթոռի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանը, վանքի հոգեւոր սպասավորներն ու բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Սուրբ Գայանե վանքում մատուցվեց սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագիչն էր ԱՄՆ արեւելյան հայոց թեմի փոխառաջնորդ Տ. Սիմեոն աբդ. Օդաբաշյանը: Օրվա խորհուրդի շուրջ քարոզ խոսեց Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Պարթեւ վրդ. Բարսեղյանը:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադառնալով Սուրբ Գայանյանց կույսերի կյանքին եւ նահատակությանը, ընդգծեց, որ սուրբ կուսանաց կյանքը, նահատակությունը սոսկ վարքագրություն չեն, դրանք պատմական անհերքելի իրողություն են, որոնց դասերն ուսանելի են բոլոր ժամանակներում եւ մանավանդ մեր օրերում, երբ հաճախ է փորձ արվում աղճատել, ոչնչացնել այնպիսի վեհ, նվիրական արժեքներ, ինչպիսիք են հավատքը եւ նվիրումը:

«Սուրբ կույսերի սխրանքը անմահ է եւ ոգեշնչում է ամենքիս: Նրանց սրբակենցաղ վարքը վարակիչ է մեզ համար, որպեսզի մեր կյանքն ապրենք ժուժկալ, հավասարակշռված եւ ամենակարեւորը՝ պատասխանատվության բարձր զգացումով, մեր խոսքին ու գաղափարներին հավատարիմ, խոսքն ու գործը համարժեք լինեն միմյանց, հավատքը՝ զորեղ, իսկ հավատարմությունը՝ երկրի նկատմամբ անխորտակ»,– ասաց հայր Պարթեւը՝ հորդորելով հավատացյալներին սուրբ կուսանաց բարեխոսությամբ եւ ամուր հավատքով կերտել իրենց անհատական կյանքը, հայրենիքի խաղաղությունը, ապահովությունն ու անվտանգությունը՝ հանուն ապագայի եւ հանուն եկող սերունդների շեն ու բարօր կյանքի:

Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակի տոնախմբությունը

Հունիսի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը: Տոնական այդ օրը նաեւ Սուրբ Հռիփսիմե վանքի ուխտի օրն է:



Առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցականների թափորը հավատացյալների ուղեկցությամբ, Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, շարժվեց դեպի Սուրբ Հռիփսիմե վանք՝ տանելով Սուրբ Հռիփսիմեի մասունքները: Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամարի առջեւ Ամենայն Հայոց Հայրապետը սրբազան Աջով օրհնեց հոգեւոր դասին եւ ներկա բարեպաշտ ժողովրդին՝ այն փոխանցելով Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանին:

Սուրբ Հռիփսիմե վանքի առջեւ թափորը դիմավորեցին վանքի հոգեւոր սպասավորները եւ տարբեր վայրերից ժամանած բազում ուխտավորներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանի գլխավորությամբ:

Բերկրառատ տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Սուրբ Հռիփսիմե վանքում մատուցվեց սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Մինաս աբդ. Հախվերդյանը: Պաատարագի սրբազան արարողությանը ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի առիթով Մայր Աթոռ ժամանած թեմակալ առաջնորդներ, միաբանական համագումարի մասնակիցներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:

Օրվա խորհրդի մասին քարոզեց Բելգիայի հայ համայնքի հոգեւոր հովիվ Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանը:

Հայր սուրբը, անդրադառնալով օրվա խորհրդին, պատգամեց հավատավոր ժողովրդին հետեւել կույս Հռիփսիմեի սրբության օրինակին եւ սրբուհու բարեխոսությամբ ամրանալ հավատքի մեջ:

«Սիրելի՜ հավատացյալներ, աղոթենք առ Աստված, որ ինչպես պատմության ընթացքում Սուրբ Հռիփսիմեի օրինակով բազմաթիվ հավատացյալներ իրենց գործունեությամբ կենդանի պահեցին մեր հավատքը, այնպես էլ այսօր եւ վաղը հայտնի ու անհայտ նոր սրբեր ծնունդ առնեն մեր Եկեղեցու անդաստանի մեջ եւ ապահովեն մեր կյանքում Հռիփսիմյանց կույսերի ոգին»,– ասաց հայր Զատիկը՝ հորդորելով հավատացյալներին լցվել հավատքով, հույսով, սիրով ու հայցել Աստծու ողորմությունը մեր երկրի ու ժողովրդի համար:

Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը Մայր Աթոռում

Հունիսի 11-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը:

Բերկրառատ օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռ ժամանած թեմակալ առաջնորդներ, Սուրբ Էջմիածնի տարբեր կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբանական համագումարի մասնակիցներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Տոնի խորհրդի շուրջ քարոզ խոսեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը: Պատրիարք հայրը, անդրադառնալով օրվա խորհրդին, մասնավորապես նշեց. «Ինչո՞վ է կարեւոր Էջմիածինը մեզ համար: Սուրբ Էջմիածինը մեզ համար միայն տաճար չէ, այլ գաղափար է, մեր ազգը միավորող ամենազորեղ իրողություններից մեկն է, ուխտ եւ տեսիլք է մեզ համար: Այս տարածքը՝ Վաղարշապատը, մեզ համար դարձավ Սուրբ Էջմիածին Աստծու կամքով ու ողորմությամբ: Աստված մեզ տվեց հայկական Ավագ շաբաթը, որն սկսվում է Հռիփսիմյանց կույսերի նահատակությամբ եւ հասնում մինչեւ շաբաթ՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի «ելն ի վիրապէն» տոնը, հայոց պետականության քրիստոնեացման իրադարձությունից մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքը: Ուրեմն՝ այս Ավագ շաբաթն է, որ մեր ազգի պատմության մեջ անմոռանալի հետքեր է թողել: Աստված մարմնացրեց իր գաղափարը Սուրբ Էջնիածնի տաճարի մեջ, եւ այս խորհուրդը մեր նախնիները փոխանցել են նոր սերունդներին, ու դրա շնորհիվ է, որ մենք մեկ ազգ ենք»:

Պատրիարք սրբազանը հորդորեց հավատացյալներին մշտապես վառ պահել հայոց սրբությունները իրենց հիշողության մեջ, ապրել ու զորանալ Սուրբ Էջմիածնի խորհրդով:

Սուրբ Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հայրապետական մաղթանք: Ներկա հավատացյալ ժողովուրդը եւ եկեղեցականաց դասն աղոթք բարձրացրեցին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շենացման, անսասանության եւ իր սրբազան առաքելության հարատեւության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուտափույթ ապաքինման իր մաղթանքներն է հղել Ֆրանցիսկոս Պապին

Հունիսի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շուտափույթ ապաքինման իր մաղթանքներն է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապին՝ վիրահատության առիթով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարեմաղթել է, որ ամենախնամ Տերը քաջառողջություն պարգեւի Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապին՝ շնորհելով հովվապետական երկար տարիների ծառայություն:

Կարգալույծ է հռչակվել Տ. Ադամ քհն. Մովսեսյանը

Հունիսի 7-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Ադամ քհն. Մովսեսյանը: Տնօրինության համար հիմք են ծառայել Տ. Ադամ քահանայի՝ Իրաքի հայոց թեմում ծառայության վայրն ինքնակամ լքելը եւ ԱՄՆ մեկնելը: Կարգալույծ եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքին՝ Դավիթ Մովսեսյան ավազանի անունով:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

✠ ՄՅՈՒՌՈՆՕՐՇՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ

Վազգեն Ա Պալճյանի հայրապետության շրջան (1955–1994)

1926 թ. մյուռոնօրհնությունից հետո մինչեւ 1955 թ. մյուռոնի օրհնություն չի կատարվել: Դա պայմանավորված էր խորհրդային իշխանությունների հակահայկական քաղաքականությամբ: Չնայած դրան՝ Գեւորգ Զ Չորեքչյան հայրապետը (1945–1954 թթ.) ամեն ջանք գործադրում էր, որ կարողանար կատարել հայ ժողովրդի ամենանվիրական ազգային-եկեղեցական հանդեսը: 1945 թ. Գեւորգ Զ կաթողիկոսը Կենտրոնական իշխանությանը ներկայացնում է դիմում, որով թույլատրվում էր կատարել մյուռոնի օրհնություն: Գեւորգ հայրապետը որոշել էր մյուռոնն օրհնել սեպտեմբերի 29-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին (տես Մյուռոնօրհնությունը ԺԹ–ԻԱ դարերում, փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2015, էջ 374): Սակայն 1946 թ. նշանակված եւ կառավարության հաստատած մյուռոնօրհնությունը կրկին հետաձգվում է մինչեւ 1947 թ. աշուն: Հետաձգման պատճառով Գեւորգ հայրապետը որոշում է մյուռոնն օրհնել սեպտեմբերի 28-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին: Հետաձգման մասին լուրը հեռագրով Գեւորգ Զ կաթողիկոսը 1946 թ. օգոստոսի 28-ին հայտնում է Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա կաթողիկոսին (անդ, էջ 376): Այս անգամ կրկին մյուռոնի օրհնություն տեղի չի ունենում: 1949 թ. Գեւորգ Զ հայրապետը գաղտնի նամակ է գրում ԽՍՀՄ ՄԽ նախագահ Ի. Ստալինին, որտեղ նա գրում է. *«Նախատեսվում է ժողովի հետ միաժամանակ կատարել մյուռոնօրհնություն, որ պիտի լիներ դեռ անցյալ տարի եւ հետաձգվեց ընթացիկ տարվա աշնանը՝ կառավարության ցանկությամբ: Դա համապատասխանում էր մեր ցանկությանը, սակայն առիթ տվեց հակախորհրդային սադրանքների: Խորհրդային կառավարությունը մեղադրվում է Մյուռոնօրհնեքն արգելելու եւ Հայ եկեղեցին կառավարությանը սերտաճեցնելու մեջ»* (Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, հատոր Զ, Գէորգ Զ Չորէքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938–1955), Երեւան, 1999, էջ 552):

Արդեն 1952 թ. հունիսի 12-ին Գեւորգ Զ կաթողիկոսը կոնդակով տեղեկացնում է մյուռոնօրհնության մասին: Կոնդակում կարդում ենք. *«....քսանվեց տարի է, որ Ս. Էջմիածնում տեղի ունեցած չէ սրբալոյս միւռոնի օրհնութեան, հայ ժողովրդի սրտին մօտիկ նուիրական եւ խորհրդաւոր սուրբ արարողութիւն, որի հետեւանքով զրկուել է նա հոգեկան բարձր մխիթարութիւնից: ....1926 թուից ցայսօր սրբալոյս միւռոնի օրհնութիւն տեղի չի ունեցել եւ ներկայումս Հայ Եկեղեցին սրբալոյս միւռոնի մեծ կարիք ունի, նկատի առնելով նաեւ հայ ժողովրդի կրօնական պահանջն ու անզուսպ տենչը.... Մենք, չնայելով աշխարհի ալեկոծ վիճակին, սոյն հայրապետական կոնդակով, Ս. Հոգու զօրութեան եւ շնորհին ապաւինած, ծանուցանում ենք Մեր լծակից եւ գործակից եղբարց, Եկեղեցու հաւատարիմ պաշտօնէութեան եւ Մեր սիրեցեալ հօտին, որ 1953 թուին որոշել ենք սրբալոյս միւռոնի օրհնութիւն կատարել Հայ Եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն»* («Միւռոնօրհնութիւնը ԺԹ–ԻԱ դարերում», էջ 385–386):

Այս անգամ եւս մյուռոնի օրհնությունը հետաձգվում է:

1954 թ. Գեւորգ Զ հայրապետը հեռագրով դիմում է մայր հայրենիքի եւ սփյուռքի թեմերին՝ նույն թվականին հրավիրելով մյուռոնօրհնության: Հեռագրում ասվում էր, որ 1954 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, որոշվել է մյուռոն օրհնել: Այնուհետեւ հեռագրում կարդում ենք, որ հայրապետը պատվիրում է Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին եւ հայրապետական թեմի բոլոր առաջնորդներին գալ Ս. Էջմիածին եւ մասնակցել հանդեսին, ինչպես նաեւ սփյուռքի տասնմեկ թեմերից եւ Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքարաններից

մի-մի աշխարհիկ պատգամավոր ուղարկել (անդ, էջ 390): Սակայն այս անգամ, Գեւորգ Զ Չորեքչյան հայրապետի վերահաս մահվան պատճառով, մյուռոնօրհնություն տեղի չի ունենում: Այդպես էլ երկար ու դժվար փորձերից հետո Գեւորգ Զ հայրապետին չհաջողվեց կատարել մյուռոնի օրհնություն:

Սակայն 29 տարվա երկարատեւ ընդմիջումից հետո՝ 1955 թ. հոկտեմբերի 8-ին՝ Ս. Թարգմանիչ վարդապետների տոնախմբության օրը, նորաօծ Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսը (1955–1994 թթ.) հայրապետական գահին բազմելուց մեկ շաբաթ անց կատարում է երկար սպասված սրբալոյս մյուռոնի օրհնությունը: Օրհնության այս մեծաշուք հանդեսին ներկա էին Ազգային-եկեղեցական ժողովի աշխարհիկ եւ կրոնական բոլոր պատգամավորները եւ հյուրեր: Ներկա էին ՍՍՌՄ մինիստրների սովետին կից Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին եւ Հայկական ՍՍՌ մինիստրների սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հ. Գ. Գրիգորյանը: Ներկա էին նաեւ Մինսկի եւ Բելառուսիայի մետրոպոլիտ Պիտիրիմը, Պսկովի եւ Պորխովի եպիսկոպոս Իոանեսը, Բաթումի-Շեմոկմեդիի եւ Չկոնդիդիի մետրոպոլիտ Եփրեմը, ինչպես նաեւ հազարավոր ուխտավորներ: «Էջմիածին» ամսագրում կարդում ենք. *«....առաջին բանը, որ աչքի է զարնում, դա ժողովրդի հոծ բազմությունն է, որը բռնել է ամբողջ վանքի բակը եւ պարիսպներից ներս եղած ողջ տարածությունը: Հայ ժողովրդի զանազան բարբառներով խոսող, տարբեր շրջաններից, տարբեր տեղերից ու վայրերից Էջմիածին լցված բազմամբոխ զանգվածներն այսօր կազմում են միասնական ամբողջություն: Ուխտավորներ էին եկել Թբիլիսիից, Բաքվից, Ռոստովից, Հյուսիսային Կովկասից, Երեւանից, Հայաստանի տարբեր շրջաններից, Սրբալույս Մյուռոնի օրհնության հանդեսին մասնակցելու համար, գաղթաշխարհի հայ ուխտավորներն էլ այսօր կտրել են հազարավոր մղոններ, անցել գետեր, ցամաքներ, ծովեր, աշխարհի մի ծայրից մյուս ծայրն է հասել: Ս. Էջմիածինը քաշել, բերել է նրանց բոլորին իր սիրասուն մայրական գիրկը՝ իր մեռոնաբույր օրհնությունն ու սերը բաշխելու»* («Սրբալույս մեռոնի օրհնությունը Ս. Էջմիածնում», «Էջմիածին», 1955, Ժ–ԺԱ, էջ 101):

1955 թ. օրհնությունից հետո հաջորդ օրհնությունը կատարվում է յոթ տարի հետո՝ 1962-ին: Վազգեն Ա կաթողիկոսի՝ ազգային-եկեղեցական ժողով գումարելու եւ մյուռոնի օրհնություն կազմակերպելու համար 1962 թ. հուլիսի 7-ին հրապարակված կոնդակում կարդում ենք. *«Անցնող այս եօթը տարիներու ընթացքին, Մենք եւ Մեր գործակիցները, մեր ուժերու չափով, աշխատանք տարինք մեր խղճի պարտքը կատարելու համար, ի վերանորոգումն եւ ի պայծառութիւն աստուածակառոյց Մայր Աթոռիս եւ ի հոգեւոր մխիթարութիւն մեր ժողովուրդին, Հայաստանի եւ արտասահմանի թեմերէն ներս... Մեր գահակալութեան եօթներորդ տարեդարձին՝ հոկտեմբեր 7-ին, կիրակի օր, Տիրոջ ողորմութեամբ պիտի օրհնենք Սրբալոյս Միւռոն Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ՝ ըստ կանոնաց եւ կարգաց մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյն»* («Մյուռոնօրհնությունը ԺԹ–ԻԱ դարերում», էջ 402): Օրհնությանն ուխտավորներ էին եկել Հայաստանի զանազան շրջաններից, ինչպես նաեւ Թբիլիսիից, Բաքվից, Ռոստովից, Հյուսիսային Կովկասից եւ Մոսկվայից: Վեհափառ Հայրապետի հրավերով Հայաստան էին եկել նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի ներկայացուցիչ Բիմեն մետրոպոլիտը, Ալեքսանդր եպիսկոպոսը եւ Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ-ի ներկայացուցիչ Իլիա վարդապետը (տես «Սրբալույս մեռոնի օրհնություն Մայր Տաճարում», «Էջմիածին», 1962, Ժ–ԺԱ, էջ 77–79):

1969 թ. հոկտեմբերի 5-ին Վազգեն Ա հայրապետը մեծաշուք հանդիսավորությամբ իր գահակալության 14-րդ տարում երրորդ անգամ կատարում է սրբալույս մյուռոնի օրհնություն: «Էջմիածին» անսագրում կարդում ենք. *«Անձրեւում է. այնուամենայնիվ ուխտավորների, պատգամավորների աշխարհախումբ բազմությունը, շուրջ 40 000 հոգի՝ սփյուռքից, Երեւանից, Հայաստանի զանազան շրջաններից եւ հարեւան եղբայրական հանրապետություններից եկած, մեծ հրճվանքով մասնակցում են սրբալույս մյուռոնի օրհնության հանդիսությանը»* («Սրբալույս մեռոնի օրհնություն», «Էջմիածին», 1969, Ժ–ԺԱ, էջ 54): Մայր Աթոռն ամբողջությամբ լցված էր ուխտավորներով, իսկ կարգապահությունը հսկում էր հարյուր հիսուն ոստիկան՝ տոնական համազգեստներով: Օրհնությանը ներկա էին նաեւ Երուսաղեմի պատրիարք Տ. Եղիշե արք. Տերտերյանը եւ Կ. Պոլսի պատրիարք Տ. Շնորհք արք. Գալուստյանը: Վազգեն կաթողիկոսի հրավերով այստեղ էին Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը, որը գլխավորում էր Տալլինի եւ Էստոնիայի մետրոպոլիտ Ալեքսին, Քիշնեւի եւ Մոլդովայի եպիսկոպոս Վորֆոլեմեյը, Վրաց Եկեղեցու ներկայացուցիչներ, Ալավերդու եւ Բոթմանի եպիսկոպոս Անտոնը, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Պողոս Զ պապի ներկայացուցիչներ հայր Ժ. Համմերը եւ հայր Դյուպրեն, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչներ Լ. Վիշերը, Ժիզիուլասը եւ այլն (անդ, էջ 60): Հետաքրքրական է, որ Ի դարի կեսերից Հայ Եկեղեցու մյուռոնօրհնությանն սկսում են իրենց մասնակցությունը բերել բազմաթիվ Եկեղեցիների առաջնորդներ ու ներկայացուցիչներ:

1976 թ. օրհնությանը Ս. Էջմիածինը եւս մեկ անգամ իր հովանու ներքո էր հրավիրել աշխարհասփյուռ հայությանը: Հայ ուխտավորներն աշխարհի բոլոր ծագերից եկել էին Ս. Էջմիածին ու մայր հայրենիք՝ իրենց հետ բերելով բյուր կարոտներ, կրոնական եւ հայրենասիրական հույզ ու ապրում: Ինչպես «Էջմիածին» ամսագրում ենք կարդում. *«....պատգամավորների, ուխտավորների աշխարհախումբ բազմությունը, ավելի քան քառասուն հազար հոգի՝ սփյուռքից, հայոց քաղաքամայր Երեւանից, մեր հանրապետության զանազան շրջաններից եւ հարեւան եղբայրական հանրապետություններից եկած, հոգեկան մեծ հրճվանքով, ազգային հպարտության քաղցր զգացումներով ներկա եղավ սրբալույս մյուռոնի օրհնությանը, որը կատարվեց բացօթյա, Մայր Տաճարի արեւմտյան մասում, զանգակատան առաջ հատուկ պատրաստված բեմի վրա»* («Օրհնություն սրբալույս մեռոնի», «Էջմիածին», 1976, Ժ–ԺԱ, էջ 38):

1983 թ. սեպտեմբերի 25-ին Վազգեն Ա կաթողիկոսն իր գահակալության քսանութերորդ տարում հինգերորդ անգամ կատարում է սրբալույս մյուռոնի օրհնությունը: Ինչպես մյուս օրհնություններին, այս օրհնությունը եւս լի էր ուխտավորներով (տես «Սրբալույս մեռոնի օրհնություն», «Էջմիածին», 1983, Թ–Ժ, էջ 25–27):

1990 թ. պետք է տեղի ունենար մյուռոնի օրհնություն, սակայն այն հետաձվում է՝ Հայաստանում տիրող քաղաքական բարդ իրավիճակի պատճառով, եւ հաջորդ տարի Վազգեն Ա կաթողիկոսին բախտ է վիճակվում ոչ միայն տեսնելու հայոց նորոգ պետականությունը, այլեւ առաջին օրհնությունը կատարելու նորանկախ Հայաստանում եւ օրհնված մյուռոնը հռչակելու Անկախության մյուռոն (տես *Մ. Վարդանյան*, Սուրբ մյուռոնօրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, «Էջմիածին», 1996, Թ, էջ 42): 1991-ի օրհնությանը Մայր Աթոռը ողողված էր հազարավոր ուխտավորներով: Ամենայն Հայոց հայրապետի հրավերով Մայր Աթոռ էին ժամանել Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի պատրիարքները, ինչպես նաեւ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Մյուռոնօրհնության առթիվ Մայր Աթոռ ժամանած Շահան արք. Սվաճյանն իր «Ուխտագնացություն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին» գրքում գրում է. *«Ինչ պատկառազդու խորհրդաւորութիւն ունէր այս պահը, երբ անդին ուղղակի հազարաւոր ժողովուրդ գրեթէ մէկ բերան կերգէր. «Ամէն Ալէլուիա»ն: Եւ ինքը՝ Վազգեն Ա Կաթողիկոս, իր Հայրապետական սուրբ օծությամբ Կենաց Փայտի մասունքով, Ս. Գեղարդով եւ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով, հատիկ հատիկ կըսէր. «Օրհնեսցի եւ սրբեսցի սրբալոյս միւռոնս»: Դարեր իրարու խառնուած էին: Կարծէք հոն, այդ բեմին վրայ եկած կեցած էր Հայոց Հաւատքի Հայր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ....»* (*Շահան արք. Սվաճեան*, Ուխտագնացութիւն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Իսթանպուլ, 1993, էջ 32–33):

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ



Հայացք դարի բարձունքից

Մեր ժողովրդի պանծալի դուստրերից մեկն էլ Մարիամ Ասլամազյանն է: Խորհրդային Միության եւ Հայաստանի ժողովրդական նկարիչը՝ միջազգային հեղինակավոր մրցանակների դափնեկիրը, ապրեց ուղիղ հարյուր գարուն: 1906–2006 թթ.,– փորագրված է Կոմիտասի անվան զբոսայգու՝ հայ մեծերի պանթեոնում հանգչող գեղանկարչուհու տապանաքարին: Եվ նրան երկարակեցություն պարգեւեց բոլոր բարիքների մայրը՝ աշխատանքը:

Շուրջ յոթ տասնամյակ, սրտի եւ հոգու թարգման իր անբաժան վրձնով, շրջագայել է նա աշխարհի շատ երկրներում եւ կյանքի բանաստեղծական ընկալմամբ ու ստեղծագործական բերկրանքով կերտել իր արեւոտ կտավները: Բնակվում էր Մոսկվայում, սակայն հոգին մայր Հայաստանի հետ կապված էր մշտաբար, մի առանձնակի սիրով՝ ակունքներով, արյամբ, ստեղծագործական ներաշխարհով եւ պարզապես սրտի կամրջով:

Ծնվել է Ալեքսանդրապոլից (Գյումրիից) ոչ այնքան հեռու՝ Բագրատունյաց արքայանիստ Շիրակավանում (Երազգավորգ)՝ Ախուրյան գետի չքնաղ աջափնյակում (որն այժմ, ցավոք, սահմանի ամենակուլ՝ թրքական կողմում է...): Հենց այստեղ էլ արծաթահունչ ջրերի, գեղադալար, վարսաթափ ուռիների, նաիրյան բարդիների սոսափն ու հայրական ջրաղացի անուշաձայն մեղեդիները միացել են եղնիկի վճիտ հայացքով պարմանուհու մաքրամաքուր հոգու թրթիռներին, դարձել երանգաշատ համանվագ, երազանքի թեւեր տվել աղջնակին:

Հիշատակենք նաեւ, որ Ախուրյանն ի վար՝ Ղազարապատ շենում, գետակի վրա թեքված ուռիների շվաքում էլ մեծն պոետ Ավետիք Իսահակյանենց հայրական ջրաղացն էր ախորժալուր համերգում...

Գործունյա այր, բազմահմուտ մեխանիկ, ջրաղացատեր Արշակ Ասլամազյանի շեն ու լի հյուրընկալ օջախում, ինչպես հեքիաթներում, հասակ են առել ընտանիքի յոթ աղջիկն ու միակ որդին, որոնք բոլորն էլ, բարձրագույն կրթություն ստանալով, առաջատար մասնագետներ, երկրի ու ժողովրդի համար արժանավոր մարդիկ եղան:

Զավակներից Մարիամն ու Երանուհին դարձան ճանաչված գեղանկարչուհիներ: Վաղուց անտի նրանց շատ ստեղծագործություններ զարդարում են երեւանյան, մոսկովյան, դրեզդենյան եւ աշխարհի ավելի քան քառասուն պատկերասրահներ ու թանգարաններ:

Կերպարվեստի տեսաբանները նկատել են, որ քույրերն արյունակից հարազատ են նաեւ իրենց ստեղծագործական ոճով ու ձեռագրով: «Մեզ հաճախ են հանդիմանում, թե իրականից ավելի գեղեցիկ, մինչեւ իսկ իդեալականացված ենք կերպավորում Հայաստանն ու ամեն հայկականը: Դե, ի՞նչ, այո՛, մենք հենց այդպես ենք տեսնում եւ ընկալում մեր հող-հայրենիքը՝ բազմաձա՛յն, լուսեղե՛ն, կենսավա՛ռ»: Ցուցահանդեսների առիթով, սրտի խորքից, հաճախ են այս իրողությունը հնչեցրել արվեստագետ քույրերը: Արդարեւ, ամեն բարեպատեհ առիթով նրանք սիրով եւ արժանապատվորեն են ներկայացրել հայ գեղագետների՝ իրենց գանձերի շռայլ պատկերասրահը, գործեր, որոնք ունեն ազգային եւ համամարդկային շատ ընդհանուր գծեր, բովանդակային ընդգրկումներ:

Աստվածատուր շնորհքով օժտված գեղանկարչուհիների կենսահաստատ, լուսավոր զգացումներով առլեցուն արվեստի մասին գրվել են տասնյակ արվեստաբանական գրքեր, հարյուրավոր հոդվածներ, հրատարակվել պատկերագրքեր (ալբոմներ): Նրանց ստեղծագործական կեսդարյա կյանքն առավել իմաստավորվեց, երբ մոսկվաբնակ քույրերը, որպես սրտի վաղեմի փափագ, իրենց ստեղծագործությունների հունձք-ընտրանին՝ շուրջ 660 գեղանկարչական եւ խեցեգործական աշխատանք, լիասիրտ նվիրաբերեցին հայրենի Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքին, որտեղ 1987 թվականից գործում է «Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ը:

Արեւելյան կոլորիտի հարազատ զգացողությամբ ու ոգեշնչումով ստեղծված գործերը հայ նկարչուհի Մ. Ասլամազյանին բերեցին Արեւելքի հնագույն քաղաքակրթության երկու երկրի՝ Հնդկաստանի եւ Եգիպտոսի պատվավոր մրցանակներ: Հնդկաստանում Ջավահառլալ Ներուի անվան մրցանակը 1973-ին գեղանկարչուհուն է հանձնել Ջ. Ներուի դուստրը՝ երկրի պրեմիեր-մինիստր Ինդիրա Գանդին:

Նկարների հնդկական թեմատիկայով շարքի համար Ջ. Ներուի անվան մրցանակների արժանացած խորհրդային երեք արվեստագետների՝ Մարիամ Ասլամազյանի, Վերա Արալովայի եւ Մարինա Միրոնովայի աշխատանքները 1975-ին ցուցադրվեցին մայրաքաղաք Դելիում եւ բազմամիլիոնանոց Բոմբեյ քաղաքում: Այս առիթով գեղանկարչուհիներին կառավարական իր պաշտոնավայրում ընդունում է Ի. Գանդին:

Մ. Ասլամազյանը պրեմիեր-մինիստրին է նվիրում երկու տարի առաջ պատկերագրած նրա յուղաներկ դիմանկարը: Այն շատ է դուր գալիս Ի. Գանդիին, մանավանդ որ խորապատկերում հմտորեն զետեղված էր նաեւ պաշտելի հոր՝ Հնդկաստանի նախկին պրեմիեր-մինիստր երջանկահիշատակ Ջ. Ներուի մեծադիր լուսանկարը: Այստեղ, իմիջիայլոց, փոքրիկ մի եղելություն, որը հետաքրքիր է ինքնին... Մարդկային ջերմ ու սիրալիր մթնոլորտում ընթացող հյուրընկալության ժամանակ Ի. Գանդիի ուշադրությունը գրավում է Մ. Ասլամազյանի մեջքի զարդը՝ ուշմիջնադարյան հայ վարպետների ստեղծած արծաթյա գոտին (դե, կինը միշտ կին է...): Նշում է, որ այն «հիրավի, արվեստի յուրօրինակ, սքանչելի գործ է»: Մ. Ասլամազյանը մտապահում է դա...

Հաջորդ տարի, երբ Ի. Գանդին պետական-պաշտոնական այցով ժամանում է Մոսկվա, այնուհետեւ՝ Երեւան, նկարչուհին Հնդկաստանի ղեկավարին (ի դեպ՝ նաեւ նրա երկու հարսներին) նվիրում է արծաթյա հնաոճ գոտիներ: Ի. Գանդին, խորապես զգացված նման ուշադրությունից, երախտագիտորեն ընդունում է ընծաները:

Ասում են, թե հայկական գոտին նա հաճույքով հաճախակի կրում էր մինչեւ... իր ողբերգական մահը... «Խելացի, հմայիչ, աստվածային այդ Մեծ Տիկնոջ հիշատակը ընդմիշտ կնմա իմ սրտում»,– ի խորոց սրտի գրել է Մ. Ասլամազյանը:

Մրցանակակիր նկարչուհիներին նվիրված «Երեք մենախոսություն» կինոնկարը նկարահանող «Սոյուզդոկումենտալֆիլմ» կինոստուդիայի աշխատանքային խումբը Հնդկաստանից հետո եկավ Մ. Ասլամազյանի բնօրրան՝ Հայաստան: Մ. Ասլամազյանի ցանկությամբ նկարահանումների զգալի մասը կատարվեց նրա նախասիրած «ամենահայկական» վայրերում՝ Աշտարակում, Ուջանում, Ոսկեվազում, Օշականում, Բյուրականում, Տեղերում, Ամբերդում, Սաղմոսավանքում...

«Աշտարակը շատ հայաշունչ է, այն ասես Հայաստանի ու հայաշխարհի մի յուրօրինակ խտացումը լինի,– խանդավառված արտահայտվեց նկարչուհին:– Այստեղ ես ավելի խորն եմ զգում Հայաստանի բնաշխարհիկ ոգին ու գույները՝ իր բնորոշ էպիկական ու լիրիկական գծերով»:

Մոսկվացի կինոգործիչներն ամենուր նրան նկարահանեցին երանգակալը, վրձինն ու մատիտը ձեռքին, աշխատանքային միջավայրում՝ բնության անձեռակերտ հուշարձանների, պատմական կոթողների, ծաղկառատ լեռնալանջերի հետնապատկերով, բարեբեր այգիներում, հյուրընկալ հայկական օջախներում, բոլոր այն նվիրական, հոգեմոտ վայրերում, ուր իր ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում հաճախ շրջել է գեղանկարչուհին, կերտել ասլամազյանական իր անզուգական նատյուրմոռտները, դիմանկարներն ու քնարական բնապատկերները, փառաբանել Հայաստան հայրենիքը:

Ուջանում գեղանկարչուհին ու մոսկվացի կինեմատոգրաֆիստները երիտասարդ բանաստեղծ, լրագրող, իմ աշխատանքային ընկերոջ՝ Ղուկաս Սիրունյանի հարսանյաց հանդեսի պատվավոր հյուրերն էին:

Հարսանիքը գյուղովի էր...

Պետք էր տեսնել, թե Մ. Ասլամազյանը, իրեն համակած վաղեմի տարերքի մեջ, ինչ կարոտով էր դիտում Զորավար Անդրանիկի արձանամերձ հրապարակում սասունցիների ազգագրական պարերը (ի դեպ՝ տեղին է հիշել, որ մեր բնիկ հայկական պարերով ժամանակին հիացել եւ իր գրչով արժեւորել է ռուս ականավոր գրող Մաքսիմ Գորկին):

Արեւելյան վառ գորգերով ու կարպետներով զարդարված տան ընդարձակ բակում գեղանկարչուհին ակնդետ հետեւում էր հարսանեկան ծիսակարգերին, արագ-արագ ճեպանկարներ անում, իր ապագա մտահղացումների համար «որսում» տիպաժներ, կոմպոզիցիոն ուշագրավ իրավիճակներ:

Կինոֆիլմի նկարահանման օրերին էլ սկզբնավորվեց եւ շուրջ 30 տարի շարունակվեց նկարչուհու եւ իմ բարեկամությունը:

Ամիսներ անց նա ինձ հրավիրեց Մոսկվա՝ մասնակցելու «Երեք մենախոսություն» կինոնկարի առաջնադիտմանը («Դուք էլ Ձեր կազմակերպչական աջակցությունը բերեցիք մեր ֆիլմի ստեղծմանը, այնպես որ՝ համեցեք պրեմիերային»,– գրել էր նամակում:

Կարճամետրաժ երեքմասանոց կինոնկարի առաջնադիտումը կայացավ ԽՍՀՄ մայրաքաղաքի «Ռոսիա» շքեղ կինոթատրոնում: Լայն էկրանին շուտով երեւացին նաեւ հայաստանյան հարազատ, գունագեղ պատկերներ, ծանոթ դեմքեր, դրվագներ հարսանիքից՝ կենտրոնում ամոթխած հարսն ու պարթեւահասակ փեսան: Կինոդիտողի սիրտն էլ թունդ առավ զուռնա-դհոլի զիլ թնդյունից, «Յար խուշտայի» կրակոտ ռիթմերից, որոնք մեկեն ասես «պայթեցին» դահլիճում: Հընթացս ցուցադրվում էին նաեւ հարսանքատեղում արված ճեպանկարներից «ծնված» դիմանկարներ, ապա աշտարակյան բնապատկերներ՝ դրանց համադրելով նաեւ երեք նկարչուհիների կտավներ, հետո կրկին տեսարաններ Հնդկաստանից եւ Հայաստանից՝ հռչակավոր Թաջ-Մահալ տաճարը, մեր վեհանիստ Արարատը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Վազգեն Վեհափառը, Ինդիրա Գանդին... որ մեկը թվել...

Ֆիլմի ցուցադրության ավարտին հաջորդեցին մոսկվացի հանդիսատեսի չդադարող, փոթորկալի ծափողջույնները, որոնք հասցեագրված էին կինոնկարի՝ արդեն կինոթատրոնի լուսավորված բեմահարթակ բարձրացած հերոսներին՝ երեք տաղանդավոր գեղագետներին եւ ֆիլմը հեղինակած կինոստուդիայի աշխատակազմին: Ջերմ ծափերը, արդարեւ, նաեւ հանդիսատեսի երախտիքի անկեղծ արտահայտությունն էին՝ բարձրակարգ կինեմատոգրաֆիայի



Մարիամ Ասլամազյանը Սերժ Մանուկյանի հետ

միջոցով գեղանկարչուհիների առինքնող արվեստին հաղորդակցվելու, սքանչացումի անանց պահեր ապրելու համար: Արժանին պիտի ասել եւ հատկանշել այն իրողությունը, որ կինոֆիլմի՝ Մարիամ Ասլամազյանին նվիրված մասն իր վառ կոլորիտով, գեղարվեստական շնչով ու թափով եւ ասելիքի ընդգրկմամբ, հիրավի, գողտրիկ ներբող էր առ Հայաստան, նրա ավանդապահ, բարեմիտ ու ստեղծարար մարդկանց, անկրկնելի բնությանը եւ, իհարկե, այդ ամենը վառ գույների ու խոսուն պատկերների լեզվով բանաստեղծականացրած մեծատաղանդ հայ նկարչուհուն:

* * *

Մ. Ասլամազյանի հրավերով 1978 թ. ապրիլին մասնակցեցի Մոսկվայի Ա. Ֆադեևի անվան գրողների կենտրոնական տանը «Հայաստանի գույները» թեմատիկ ցուցահանդեսի բացմանը:

Մայրաքաղաքում եղանակն անձրևային էր՝ սառն ու մառախլապատ: Ամենևին այլ «միկրոկլիմա» էր շենքի ընդարձակ սրահներում: Այստեղ արևածին գույների թագավորությունն էր, իսկ նկարների շրջանակներից ուղղակի հոգեկան ջերմություն էր ճառագում՝ ողողված Մ. Ասլամազյանի երփնագիր լույսով:

Ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը ելույթներ ունեցան Խորհրդային երկրում ճանաչված, տիտղոսակիր արվեստաբաններ, պաշտոնատար անձինք: Նրանք՝ բոլորն էլ, ըստ պատշաճի արժևորեցին Մ. Ասլամազյանի ստեղծագործական բազմաբեղուն գործունեությունը, կերպարվեստի զարգացմանը և ժողովրդին մատուցած նրա անուրանալի վաստակն ու ծառայությունները:

Ցուցադրվում էին 40-ից ավելի կտավ և խեցեգործական աշխատանք: Կտավների մեծ մասում դաշտային ու ալպիական ծաղիկներ էին՝ նկարված Բյուրականում ու Հանքավանում: Եվ ի՜նչ ծաղիկներ. կակաչները՝ հրակարմիր, ձնծաղիկները, մանուշակները, հիրիկները՝ բաց երկնագույնից մինչև մուգ արագածյանը, հազարերանգ, հազարանուն ծաղիկներ՝ բոլորն էլ թարմաշո՛ւնչ, ցողաթաթա՛վ, տրամադրո՛ղ: Բնապարգև, հրաշալիք ամեն մի ծաղիկ ընկալում ես որպես մարդ-կերպար-բնավորություն: Մեծն Իսահակյանի այնքա՛ն գովերգած «Ալագյազի զառ ու ալվան» ծաղիկները նկարչուհու վրձնումով ստացել են սյուժետային հետաքրքիր կոմպոզիցիաներ, գեղարվեստական սրտամոտ բովանդակություն՝ առաջացնելով պոետիկ հոգեհմա զգացումներ ու հույզ ինքնաբուխ... Եվ մարդկանց դիմանկարները, եւ շունչ ու ոգի առած մրգերի ու դարձյալ ծաղիկների ասլամազյանական երփնագիր պատկերավորումները դիտելիս անվերապահորեն հաղորդակից ես դառնում հեղինակի խոհերին ու տրամադրություններին, առօրեականում ու սովորականում էլ գեղեցիկը տեսնելու նրա ինքնատիպ արվեստին: ➥ էջ 7

ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

Սկիզբը՝ թիվ 9–10

Երկրորդ հարցում. *Հաւատքի միութեան մասին.*

Գիտցիր, թէ ինչպէս որ երկրնքը, արեգակը մէկ են, սակայն, ով որ աչք ունի, կը լուսաւորուի, իսկ ով որ չունի, արեգակն անոր կուրութեան պատճառը չէ, այսպէս ալ ով որ հաւատք ունի, միտքի աչքերով լուսաւոր է, իսկ ով որ չունի, միտքով կոյր է: Սակայն աւելի լաւ է, որ մարդ աչքով կոյր ըլլար, քան միտքով, որովհետեւ մարմնաւոր կուրութիւնը մեղքերուն պատճառ չէ: Ինչպէս Քրիստոս հրեաներուն ըսաւ, եթէ կոյր ըլլայիք, մեղք չէիք ունենար, սակայն քանի կ՚ըսէք, թէ մարմինով կը տեսնենք, ի՞նչ շահ կայ մարմնաւոր տեսութենէն, երբ հոգիով կոյր էք, ու այդ պատճառով մեղքը ձեր մէջ հաստատուած է:

Ինչ ազգ որ Մէկ Աստուածութեան կը հաւատայ՝ երեք անձերով, սակայն մէկ բնութիւն, եւ Քրիստոսի մարդեղութեան, այս հաւատքը բոլոր ազգերուն մէջ մէկ հաւատք կ՚ըսուի, ինչպէս Սուրբ Պօղոսը կ՚ըսէ, թէ՝ *մէկ է Տէրը, մէկ հաւատքը եւ մէկ մկրտութիւնը:* Իսկ այն, որ իւրաքանչիւր ազգ այլազան կերպով կը հաւատայ եւ տեսակ-տեսակ արարողութիւններ կը կատարեն, ատոր դաւանութիւն եւ արարողութիւն կ՚ըսուի ու ո՛չ թէ հաւատք, քանի որ հաւատքը մէկ է, իսկ դաւանութիւնը իւրաքանչիւր ազգի մէջ զանազան [կերպերով կը դրսեւորուի]:

Մէկ է հաւատքը, դաւանութիւնները՝ այլազան,
Մէկ է արեգակին ճառագայթը, զօրութիւնները՝ տարբեր:

Երրորդ հարցում. *Հաւատքի մասերը.*

Գիտցիր, թէ Եկեղեցւոյ վարդապետներն *աստիճան* բառը սանդուխներէն առած են, որովհետեւ ինչպէս որ վեր ու բարձր տեղ ելլող մարդն աստիճանով ու սանդուխով կը բարձրանայ, այսպէս ալ մենք, հաւատքի աստիճաններուն միջոցաւ հաւատքի ճշմարտութեան ճանաչումին կը բարձրանանք: Նաեւ, ինչպէս մարդը հոգիէ, մարմինէ եւ բազմաթիւ յօդերէ բաղկացած մէկ մարդ է եւ ո՛չ թէ բազում, այսպէս ալ հաւատքը, բազմաթիւ աստիճաններ ունենալով հանդերձ, մէկ է եւ ո՛չ թէ բազում:

Տակաւին, թէեւ հաւատքը մէկ է եւ ո՛չ թէ բազում, սակայն հաւատալիքները մէկ չեն, այլ շատ են, թէեւ բոլորն ալ Մէկու մը կը վերաբերին՝ Աստուծոյ եւ Անոր գործերուն: Այդ պատճառով մէկը բազմաթիւ է, իսկ բազմաթիւը՝ մէկ: Ինչպէս Աստուածութիւնը մէկ է, սակայն երեք անձեր ունի, բայց այդ երեք անձերը մէկ Աստուածութիւն են, այդպէս ալ հաւատքը մէկ է, սակայն բազմաթիւ աստիճաններ ունի, եւ այդ բազումներն Աստուծոյ նկատմամբ մէկ են, իսկ մէկը՝ բազում:

Աստուած բարձր ու անհասանելի է, դուն անոր չեմ հասնիր,
եթէ սուրբ հաւատքի աստիճանով Անոր չձգտիս:

Չորրորդ հարցում. *Քանիսն են հաւատքին աստիճանները.*

Հաւատքին աստիճանները տասներկուսն են՝ Քրիստոսի սուրբ առաքելներու թիւին համաձայն: Անոնցմէ իւրաքանչիւրը մէկ աստիճան մը ըսաւ: Սակայն ինքն իրմէ եկող հաւատալիքները տասնչորոս են, որոնցմէ եօթն անմարմին Երրորդութեան մասին են, իսկ միւս եօթը՝ Աստուծոյ մարմնացեալ Բանին՝ Յիսուս Քրիստոսի:

Տասնչորոս աստիճանով դէպի վեր՝ երկինք կ՚ելլես,
Եթէ քիչ չհաւատաս ու բարի գործեր գործես:

Հինգերորդ հարցում. *Որո՞նք էին հաւատքի աստիճանները սահմանողները եւ ո՞ւր սահմանեցին:*

Հաւատքի տասնչորս աստիճաններուն սահմանողները Քրիստոսի տասներկու առաքելներն էին, որոնցմէ իւրաքանչիւրը հաւատքի կարեւոր ու օգտակար խօսք մը ըսաւ՝ հաւատալի իւրաքանչիւր հաւատացողի համար: Իսկ թէ ո՞ւր սահմանեցին. գիտցի՛ր, թէ Աստուած Հին Օրէնքը Մովսէսին տուաւ Սինա լեռան վրայ, որ ներկայիս արաբները Թուրիսինա կը կոչեն. իսկ Նոր Օրէնքն ու հաւատքի աստիճանները՝ Սուրբ Հոգին սուրբ առաքելներուն սորվեցուց՝ Սիօն լեռան վրայ՝ Սուրբ Վերնատան մէջ, ուր Քրիստոս Աւագ հինգշաբթի օրը պատարագեց Իր Մարմինն ու Արիւնը:

Ա՛յս եւս իմացիր, թէ ինչպէս որ Աստուած իսրայէլացիներուն որդիները Եգիպտոսէն՝ փարաւոնի ձեռքէն ազատելէ ետք յիսուն օր յետոյ Տասնաբանեայ պատուիրանները տուաւ, այսպէս ալ մեր Քրիստոս Աստուածը Իր յարութենէն ետք յիսուներորդ օրը՝ Սուրբ Հոգիին գալուստով Նոր Օրէնքն ու հաւատքի տասնչորս աստիճանները տուաւ:



Տակաւին, ինչպէս հրեաները Եգիպտոսէն ազատեցան, որ դժոխքի օրինակն էր, եւ փարաւոնէն՝ որ սատանայի օրինակն էր, եւ ապա Աստուծոյ Օրէնքն ստացան Մովսէս մարգարէին միջնորդութեամբ, այսպէս ալ Քրիստոս նախ մեզ դժոխքի բանտէն ու սատանայի ձեռքէն ազատեց եւ ապա Իր յարութենէն յիսուն օր ետք տուաւ Իր շնորհներուն օրինեալ ու Նոր Օրէնքը՝ սուրբ առաքելներուն միջնորդութեամբ:

Տասներկու սուրբ առաքելները Սուրբ Սիօնի Վերնատան մէջ,
Մեր հաւատքին սահմանը՝ տասնչորս [աստիճանով] անխախտ դրին:

Վեցերորդ հարցում. *Առաքելներէն ո՞վ հաւատքի ո՞ր աստիճանը ըսաւ:*

Հաւատքի առաջին աստիճանը Պետրոս առաքելն ըսաւ, որ հետեւեալն է. Կը հաւատամ մէկ Աստուծոյ, ամենակալ Հօր, երկինքի ու երկրի Արարիչին:

Երկրորդը՝ Սուրբ Յովհաննէս աւետարանիչը. Մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Անոր [Հօր Աստուծոյ] Որդիին, մեր Տիրոջ:

Երրորդը՝ Յովհաննէսի եղբայր Յակոբոսը. Սուրբ Հոգիէն յղացաւ եւ Կոյս Մարիամէն ծնաւ:

Չորրորդը՝ Անդրէաս առաքելը. Պիղատոս Պոնտացիի հրամանով չարչարուեցաւ, խաչուելով մեռաւ ու թաղուեցաւ:

Հինգերորդը՝ Թովմաս առաքելը. Դժոխք իջաւ:

Վեցերորդը՝ Բարդուղիմէոս առաքելը. Երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ:

Եօթներորդը՝ Փիլիպպոս առաքելը. Երկինք ելաւ ու ամենակարող Հօր աջ կողմը նստաւ:

Ութերորդը՝ Մատէթոս աւետարանիչը. Անկէ պիտի գայ դատելու համար ողջերն ու մեռելները:

Իններորդը՝ Յակոբոս Ալփեանը. Կը հաւատամ Սուրբ Հոգիին:

Տասներորդը՝ Սիմոն Կանանացին. Եւ Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցիին ու սուրբերու հաղորդակցութեան:

Տասնմէկերորդը՝ Թադէոս առաքելը. Մեղքերու թողութեան:

Տասներկրորդը՝ Մատաթիա առաքելը. Մարմիններու յարութեան եւ յաւիտենական կեանքին:

Հաւատքի այս աստիճանները Յորդանանի սուրբ քարերն են, որոնցմէ լոյսի տաճարը կը շինուի, որու մէջ Բանն Աստուածը կը բնակի:

Եօթներորդ հարցում. *Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը:*

Ա.

Սուրբ Պետրոս առաքելը մեզի կ՚ուսուցանէ նախ եւ առաջ մէկ Աստուած, ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս. որովհետեւ մէկ Աստուծմէ աւելի պակաս չըլլար, իսկ մէկ Աստուծմէ աւելին չկայ, այդ պատճառով ըսաւ, թէ՝ Կը հաւատամ մէկ Աստուծոյ:

Հաւատալը, սակայն, երեք կերպով է. նախ՝ հաւատալ, թէ Աստուած կայ. բարի մարդիկն այսպէս կը հաւատան, իսկ չարերը՝ այլ կերպ: Երկրորդ՝ հաւատալ Աստուծոյ, այսինքն՝ հաւատալ աստուածային Սուրբ Գիրքերուն ու օրէնքներու խօսքերուն. այս կերպով Աստուծոյ հաւատալը կը նշանակէ հաւատալ Աստուծոյ անսուտ խօսքերուն ու ըսել, թէ ինչ որ Աստուած ըսած է, ճշմարիտ է. այս հաւատքն ընդհանուր է բարի ու չար մարդոց: Երրորդ՝ հաւատալ Աստուծոյ. այս կերպ հաւատալը բարի գործերով սիրելն է զԻնք ու սիրով դէպի Իրեն երթալն է, եւ յաւիտեանս յաւիտենից անբաժան մնալն է Իրմէ: Այս հաւատքը յատուկ է բարի մարդոց միայն, քանի որ չար մարդիկը զԱստուած չեն սիրեր, այլ՝ աշխարհն ու աշխարհի ունայնութիւնները կը սիրեն, այդ պատճառով Աստուծոյ մօտ՝ երկինք չեն կրնար երթալ, այլ՝ դժոխք կ՚իջնեն, ինչ բանէն Աստուած ազատէ մեզ:

Երկրորդ՝ Սուրբ Պետրոս մեզի կը սորվեցնէ հաւատալ Հայր Աստուծոյ, որ Սուրբ Երրորդութեան առաջին Անձն է. որովհետեւ միայն հաւատալ, թէ Աստուած կայ, եւ Ան մէկ է, այս հաւատքը մարդս չի՛ փրկեր, մինչեւ որ չհաւատանք, թէ երեք Անձեր են եւ մէկ բնութիւն:

Երրորդ՝ կ՚ուսուցանէ մեզի, թէ Հայր Աստուած ամենակարող է եւ ի՞նչ որ կամենայ, կրնայ ընել: Արդարեւ, քանի որ ամենակալ ու ամենակարող է, կրցաւ ոչինչէն, միայն խօսքով երկինքն ու երկիրն ստեղծել, այդ պատճառով ըսաւ՝ Երկինքի ու երկրի Արարիչ: Սակայն ոչինչէն ստեղծելու այս գործը Երրորդութեան գործն է եւ ո՛չ թէ միայն Հօր Աստուծոյ: Այս բանը կը յայտնէ Դաւիթ մարգարէն մէկ տուն սաղմոսով. *Երկիրը Տիրոջ ողորմութեամբ լեցուեցաւ.* ահաւասիկ Հայրը. *եւ Տիրոջ խօսքով երկինքը հաստատուեցաւ.* ահաւասիկ Որդին. *եւ Անոր բերանին հոգիով անոնց բոլոր զօրութիւնները.* ահաւասիկ՝ Սուրբ Հոգին:

Սուրբ Պետրոս հաւատքի վէմը, յասպիս քարն է թանկագին,
Որ հաւատքի առաջին խօսքը՝ Սիօնի անարատ հիմքը դրաւ:

Բ.

Երկրորդ աստիճանը Յովհաննէս աւետարանիչին ըսածն էր, թէ՝ Մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Անոր [Հօր Աստուծոյ] Որդիին, մեր Տիրոջ: Սուրբ Յովհաննէս այս խօսքով չորս բան կ՚ուսուցանէ մեզի:

Նախ, թէ կը հաւատամ Յիսուսին՝ Աստուծոյ Որդիին, որ բոլորին Փրկիչն է, որոնք հաւատքով կը մօտենան Իրեն. որովհետեւ Յիսուս անունը փրկիչ կը թարգմանուի, իսկ մեզի, Յիսուսէն զատ, ուրիշ փրկիչ չկայ:

Երկրորդ՝ կը սորվեցնէ թէ Ա՛ն է Օծեալ Քրիստոսը, գթած ու բարերար Տէրը, որ մեզ սատանայի գերութենէն, մեղքերէն ու մահէն փրկելու համար եկաւ ու մարմին առաւ բանական հոգիով Սուրբ Կոյսէն. Իր Աստուածութեամբ մարդկութիւնն օծեց, իբրեւ թէ իւղով. այդ պատճառով իւղ թափելով՝ կոչուեցաւ Անոր սուրբ անունը:

Երրորդ՝ կ՚ուսուցանէ մեզի, թէ Յիսուս Քրիստոսը բնութեամբ Աստուծոյ Որդին է, ինչպէս որ Հայր Աստուած Յորդանանի եւ Թաբոր լեռան վրայ վկայեց, ըսելով՝ *Ա՛սիկա Իմ սիրելի Որդիս է:* Իմաստունները կ՚ըսեն, թէ՝ կատարեալը՝ իր նման կատարեալ կը ծնի: Արդարեւ, Հայր Աստուած կատարեալ է, որով կատարեալ ծնաւ Իր Որդին՝ մեր Տէրը Յիսուս Քրիստոս:

Չորրորդ՝ կը սորվեցնէ մեզի, թէ այդ Որդին յատկապէս մեր Տէրն է, որովհետեւ Ան մեզ ստեղծեց, ինչպէս կ՚ըսէ Յովհաննէս աւետարանիչը, թէ՝ *Ամէն ինչ Անով եղաւ.* Ան մեզ Իր Արեամբ գնեց, ինչպէս կ՚ըսէ Պետրոս առաքելը, թէ՝ *Ո՛չ թէ արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրենատուր չար գործերէն, այլ՝ Աստուծոյ անմեղ Գառնուկին՝ Քրիստոսի պատուական Արիւնով:* Քանի որ Իր Արեամբ մեզ գնեց, մեր Տէրն ու Տիրականը եղաւ, իսկ մենք՝ Անոր ծառաները:

Սուրբ Յովհաննէսը շափիւղայ է, երկինքի գոյնով յակինթ,
Միայն մեր Տիրոջ կը հաւատայ՝ Յիսուս Փրկիչ կոչելով:

Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

Հայացք դարի բարձունքից

↩ *էջ 6*

Աչքդ ներքին հրճվանքով է սևեռվում «Ծաղիկները ցայգալույսին», «Արծաթաշող սմբուլներ», «Դեկորատիվ մոտիվ», «Ծաղիկներ և լեռներ», «Գույների թագավորություն» կտավների վրա: Դրանք այնքան կենսալից, ծիծաղկուն ու արբեցնող փառահեղ են, որ մի պահ այն պատրանքն ես ապրում, թե շուրջբոլորդ ինքը՝ հայրենի կենդանի բնությունն է, և մտքով սլանում ես Հայաստան կոչվող արևային մի լեռնաշխարհ...

«Հայաստանի գույները» թեմատիկ ցուցահանդեսի այցելուները՝ հատկապես կանայք, տևական հիացումով, խնդուն դեմքերով անցնում են նկարից նկար և ինքնաբերաբար արտաբերում հոգիները պարուրարած խոսքեր՝ ծաղիկների հրճվա՛նք է սա, կյանքի ժպիտը... (Թվում էր, թե շրջանակված նկարների թովիչ ծաղիկները նաև... բուրում են, քանզի ցուցասրահները ծայրեծայր հագեցած էին անուշահոտությամբ... Իրականում նկարների ծաղիկների այդ միակ պակասն ակամա լրացնում էին գեղեցկուհի այցելուները՝ իրենց նրբին, դյութող ծաղկաբույր օծանելիքներով...): Բովանդակ ցուցահանդեսը, անտարակույս, ճշմարիտ, սրտագրավ արվեստի հետ այն հանդիպումն էր, որը երևույթ և իրադարձություն է դառնում գեղապաշտ մարդու կյանքում:

Շարունակելի

ՍԵՐԺ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աստրախանի հայկական եկեղեցին

Ղզլարի Կրթական փողոցը

Ղզլարի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1812 թ.

Նորահայտ վավերագրեր կուսանաց եկեղեցի կառուցելու մտադրության մասին

Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմագիր Խորեն քհն. Խուցյանն անորոշ, երբեմն էլ հակասական տեղեկություններ է հաղորդում ԺԷ դարի վերջերին կուսանոցի մայրապետի եւ միանձնուհիների Ղզլարում գտնվելու մասին:

Խուցյանը գրում է, որ Թագուհի մայրապետը (1790–1799 թթ.) հիմնականում ապրել է Ղզլարում՝ այս հանգամանքը ենթադրաբար պայմանավորելով նրա՝ ծնունդով Ղզլարից լինելով (*Խորէն քհնյ. Խուցեան*, Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը, Թիֆլիս, 1914, էջ 23):

Խուցյանի պատմության մեկ այլ դրվագի համաձայն՝ 1796 թվականին «Ռուսաց երկրի Հայոց ազգի արքեպիսկոպոս» Հովսեփ Արղությանցի տրամադրած անցագրով Թագուհի մայրապետը կույս իշխանուհի Բեհբությանցի եւ մի քանի այլ միանձնուհիների հետ Մոզդոկից պետք է գնար Ղզլար, ապա՝ Աստրախան: Իսկ թե ինչու էին Թիֆլիսի կույսերը հայտնվել այդ վայրերում, կրկին անհայտ է: Խուցյանը ենթադրում է միայն, որ նրանք այս կերպ խույս են տվել Թիֆլիսում բռնկված ժանտախտից (*Խորէն քհնյ. Խուցեան*, նշվ. աշխ., էջ 23–24):

Ըստ Խուցյանի՝ Թիֆլիսի կուսանոցի միանձնուհիները՝ 20 հոգի, երկար ժամանակ մնացել են Ղզլարում եւ վերադարձել են Թիֆլիս, երբ արդեն վախճանվել էր Թագուհի մայրապետը, եւ Հովսեփ Արղությանցը նոր մայրապետ էր նշանակել կույս Մարիամին (*Խորէն քհնյ. Խուցեան*, նշվ. աշխ., էջ 48):

Պատմության այս մութ էջերին որոշակի լույս է սփռում նույն Թագուհի մայրապետի եւ կույս Գայանե Խոջա Բեհբությանի նամակը՝ հրապարակված «Բանբեր Մատենադարանի» հանդեսում, ինչպես նաեւ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահվող նորահայտ ու դեռեւս անտիպ մի քանի նամակներ: Դրանք բացահայտում են Թիֆլիսի կույսերի՝ Ռուսահայոց թեմում գտնվելու հանգամանքը, իսկ որ ավելի ուշագրավ է, տեղեկացնում են Հովսեփ արք. Արղությանի՝ կույսերի համար եկեղեցի եւ կացարան կառուցելու կամ որ նույնն է՝ կուսանոց հիմնելու մտադրության մասին:

Վավերագրերից ամենավաղը Մատենադարանի ձեռագիր ժողովածուներից մեկում ներառված՝ մայրապետի եւ կույս Գայանեի Մոզդոկից գրված վերոհիշյալ նամակն է՝ թվագրված 1795-ով եւ հասցեագրված ժամանակի հայտնի ազգային գործիչ Հովհաննես Լազարյանին եւ նրա տիկնոջը: Նամակից հայտնի է դառնում, որ կույսերը Մոզդոկ են հասել՝ փախչելով նույն թվականի սեպտեմբերին պարսից Մահմադ խանի՝ Թիֆլիս կատարած վայրի արշավանքից: Նամակագիրները, իբրեւ ականատեսներ, պատմում են պարսից զորախմբի անասելի վայրագությունների, ինչպես նաեւ հրո ու սրո ճարակ դարձած քաղաքից իրենց մազապուրծ փախուստի մասին:

Ահա թե ինչպես են նկարագրում կույսերն իրենց հապշտապ փախուստը. *«Մեք տառապեալ Թիֆլիզու կուսանքս ի մէջ գիշերի հապճէպ փախեաք: Զմասն ի կենաց խաչափայտից եւ զայլ սրբոց մասունս եւ զտեսակ-տեսակ զանօթս եկեղեցւոյ մերոյ ի պալատս իշխանաց իշխանի քաղաքի՝ մելիքի մերոյ Խոջայ Բեհբուդեան յորջորջեալ, հանգուցեալ մելիք Աշխարհբէգի եւ Մինիշկար Աղայի ի պահեստի ուրուք պահպանեցաք արկեղբք. ոչ գիտեմք, որոնեալ, գտեալ են անհաւատքն, թէ նոյնպէս կայ ի պահեստի անդ, իսկ ընդ մեզ առաք զայլ մասն խաչափայտից՝ առանց պահարանի, որ մականուամբ Հոռոմու խաչափայտի մասն կոչի եւ քանի մի զայլ սրբոց մասունս առաք ընդ մեզ, բայց որ ըստ հասարակութեան հարկաւորն է, այսինքն զգնելի հանդերձս մեր՝ ըստ օրինի կուսանաց՝ զփիլօնս եւ զվերարկուս մեր թողաք եւ փախեաք ի մէջ գիշերի, որպէս ասացեաք ի վեր անդր, որ յիրաւի առանց հոդաթափ եւ մուճակի, ելեալ եմք բոկ ոտիւք ի մենաստանէ եւ ի քաղաքէ մերմէ եւ եկեալ հետիոտս ի լեռնակողմն, ի կիրճս լերանց եւ անդ աւուրբք բազմօք, ի բացօթեայ տեղի, ի ներքոյ անձրեւի կայաք, թող թէ զհասարակաց կերիլս, որ է հացն՝ ոչ գտանէաք, զի ոչ թէ մի էր եւ մի վիշտն եւ կսկիծն ամէնեցունս, որք մազապուրծ եղեալ ելեալ եմք իբր թէ իբր միայն ի հայրենական բնակութենէ հեռացեալ եւ օտարացեալ եմք, այլ բազմատեսակ վէրք եղեն ամենեցունս»* (*Ռ. Տիտանյան*, «Նորահայտ մի փաստաթուղթ 1795 թ. Թբիլիսիի աղետի մասին», Բանբեր Մատենադարանի, 1960 (5), Երեւան, էջ 488–489):

Հովսեփ արք. Արղությանց, 1743 թ.

Նամակի տակ 2 կույսերի ստորագրություններն են. *«Հանգուցեալ Յովսէփի դուստր, սարկաւագուհի, կուսանաց (վարդապետ) մայրապետուհի եւ մայր վանաց՝ անուամբ Թագուհի եւ մակաբերեալ ազեաւ Միրիմանեանս եւ Տփխիսու հանգուցեալ իշխան Մելէք աղայի դուստր սարկաւագուհի Գայիանէ յորջորջեալ Խօջայ Բէհբուդեանս միաբան սարկաւագուհեօք եւ կուսանօք հանդերձ»* (անդ, էջ 490):

Արդյո՞ք փախստական կույսերն Արղությանի տրամադրած անցագրով, որի մասին հիշատակում է Խուցյանը, Մոզդոկից Ղզլարով հասել են Աստրախան, հայտնի չէ: Սակայն Մատենադարանի արխիվներում պահվող նորահայտ նամակները վկայում են, որ նրանք կանգ են առել Ղզլարում, որտեղ եւ մնացել են բավական երկար տարիներ:

Բոլոր այդ նամակները, բացառությամբ մեկի, գրված են Ղզլարից՝ կույսերի փախուստից 3–4 տարի անց՝ 1798–1799 թթ., եւ հասցեագրված են այդ տարիներին Ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղությանին: Նամակներից երկուսի հեղինակը Թագուհի մայրապետն է, եւս մեկինը՝ կույս Մարիամը: Մնացած նամակների հեղինակները հոգեւորականներ են՝ Ղզլարի Մինաս եւ Սահակ քահանաները եւ Աստրախանից Թադեոս վարդապետը, որոնք իրենց գրություններում զանազան հարցերի հետ մեկտեղ անդրադառնում են նաեւ Ղզլարում հանգրվան գտած կույսերի խնդիրներին:

Հովսեփ Արղությանի՝ կուսանաց եկեղեցի կառուցելու մտադրության մասին նախ տեղեկանում ենք Մինաս քահանայի՝ 1798 թվականի փետրվարի 25-ի նամակից: Նամակում խոսվում է Արղությանի՝ մեզ դեռ անհայտ հրամանի մասին, որը կույսերն ընդունել են շնորհակալությամբ, սակայն պատասխանել են, որ քաղաքի իշխանները չեն կատարել եկեղեցի կառուցելու իրենց խոստումը:

Մինաս քահանան գրում է նաեւ, որ հայտնել է իշխաններին, եւ «նոքա կարի յոժարութեամբ յանձն առին, որ զամենայնն կատարեսցեն»: Նամակի վերջում քահանան Արղությանին փոխանցում է կույսերին կայսերական ռոճիկ սահմանելու խնդրանքը, ինչը հուշում է Ղզլարում նրանց ոչ այնքան բարվոք վիճակի մասին:

Ավելորդ չենք համարում ամբողջությամբ ներկայացնել Մինաս քահանայի նամակի՝ կույսերին վերաբերող հատվածը (այս եւ մյուս նամակների վերծանմանն աջակցելու համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանին):

Մինաս քահանան գրում է. *«Այլ եւ վասն կուսանացն, զոր հրամայեալ էիր, տարեալ ներկայութեամբն նոցին ընթերցայ: Եւ նոքա պատասխանեալ, թէ մէք ամենայն կողմանէ շնորհակալ եւ յօժարեմք, բայց թէ իշխանք քաղաքիս, զոր ինչ խոստացան եւ ոչ կատարեցին, երկնչիմք, միգուցէ մեք խնդրեմք եւ յետ կատարման խնդրանացն մերոց: Իշխանքն զեկեղեցին եւ զբնակութիւնս մեր ոչ շինեցին: Մնայցեմք մեք ողորմելիք եւ սուտ առաջին կայսերութեանն, եւ իմ գնացեալ յայտնեցի իշխանացն, եւ նոքա կարի յոժարութեամբ յանձն առին, որ զամենայնն կատարեսցեն: Եւ յայտնեցի կուսանացն, որ եւ յօժար կամօք օրհնելով զՏէրդ գրեցին զխնդրագիրս իւրեանց, որ եւ եդեալ պահարանոցս տեսանելոցես:*

Գիտէ Տէրութիւնդ, որ մանաւանդ մեծ բարերարութիւն առնիցես, եթե կայսերական ըռոճիկն հաստատես» (Կաթ. դիւան, թղթ. 8, վ. 12):

Նկատենք, որ նամակագիրն այդպես էլ չի մատնանշում, թե որ քաղաքի իշխանները «զեկեղեցին եւ զբնակութիւնս մեր ոչ շինեցին», եւ կամ հետո ինչ իշխանների է դիմել, որոնք «յոժարութեամբ յանձն առին, որ զամենայնն կատարեսցեն»:

Սակայն նամակի բովանդակությունից հստակ է, որ խոսքը կուսանաց եկեղեցի կառուցելու մասին է, եւ որ Արղությանի նշված հրամանը եւս վերաբերել է եկեղեցու կառուցմանը: Որն է եղել նման նախաձեռնության շարժառիթը, հայտնի չէ: Թերեւս կարելի է ենթադրել, որ այն պայմանավորված է եղել Թիֆլիսի կույսերի համար առավել անվտանգ վայրում մի նոր կուսանոց հիմնելու նպատակահարմարությամբ:

Անորոշ է մնում նաեւ եկեղեցու կառուցման վայրը: Արդյո՞ք այն պետք է կառուցվեր այն տարիներին առաջնորդանիստ Հաշտարխանում (Աստրախան), թե՞ Ղզլարում, որտեղ հանգրվանել էին Թիֆլիսի կույսերը: Նամակում այս մասին եւս խոսք չկա:

Ամեն դեպքում Արղությանի՝ կուսանաց եկեղեցի կառուցելու մտադրության մասին մեկ այլ վկայության ենք հանդիպում Աստրախանից ուղարկված՝ Թադեոս վարդապետի գրությունում: *1798, մայիսի 4* թվագրությամբ այս նամակում վարդապետն Արղությանին ուրախությամբ հայտնում է, որ ստացել է կուսանաց եկեղեցի կառուցելու հրովարտակը:

«Ընկալայ եւ զկուսանաց եկեղեցաշինութեան հրովարտակդ զսաւատն, եւ ուրախ եղէ առ այն ոգւով չափ: Յաւելացուցէ Տէր յաւիտեանս ժամանակաց զանգին կեանս Սրբազնութեանդ, զի այդպիսի նորանոր շնորհաց արժանացուցմամբ՝ զհամայն ազգս Հայոց մշտապէս պայծառս եւ անուանիս՝ ի մէջ բոլոր աչանց երեւցեսցես»,– ասված է նամակում (Կաթ. դիւան, թղթ. 8, վ. 37):

Շարունակելի

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 21.06.2023 թ.
Տպաքանակը՝ 1265